



Տարեկան գինը 10 բուրի, կես տարվանը 6 բուրի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакція «Мшакъ».

կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրատական թուին 2 կոպեկ.

Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՀԱՐԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ



(25-րդ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1897 ԹԻՒԱԿԱՆԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Տարեկան գինը՝ 10 բուրի, կես տարվանը՝ 6 բուրի
Հասցեն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արաստահմանից՝ ТИФЛИС, Rédaction «MSCHAK».

ՄԻՔԱՅԵԼ ԹԱՄԱՄՇԵԱՆ իր որդոց հետ յայտնում է ազգականներին և ծանոթներին
իր կողմէ
ՏԻԿԻՆ ԼԻԴԻԱ ԹԱՄԱՄՇԵԱՆԻ
մայր, որ տեղի ունեցող յունվարի 29-ին Հոգեհանգիստ կը կատարվի յունվարի 30-ին և
31-ին, երեկոյան 7 ժամին, հանգուցեալի ընտանիքում, Մալաթիոսկայա փողոց, տուն
Արուսեանցի, Ալեքսանդրեան պողո. դիմաց: Յուրաքանչեւ յարաւթ օր, փետրվարի
1-ին, առաւօտեան 10 ժամին, ղէպի Նորայէնի եկեղեցին: Թաղումը նոյն եկեղեցու բա-
ղում, տոնական չիրմի մէջ:
2—2

ԲՈՎԱՆԳՆԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ է պատճառը. Ֆրանսիացիների ժողովը.
— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրէնքօր. Հանդիմանալու-
թիւն յօդու գաղթականներին. Հայ գաղթական-
ները խմբուում. Մատենագրութիւն. Նամակ
Հուլիս. Նամակ Ներքին-Արտաքին. Նամակ Վե-
րին-Արտաքին. Նամակ Հայաստանի. Նամակ
Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներ-
քին լուրեր. — ԱՐՏԱՌԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին
տեղեկութիւններ. Նամակ Արտաքին. Նամակ
Բաղրաշայից. Կրեմլի նոր արտաքինութիւ-
նը. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱՌԱՐԻՆ. — ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ժամատա-
րը.

ԻՆՉ ԵՒ ՊԱՏՃԱՌԸ

Հասերը զարմանում են, որ նոր հաս-
տատված երկրագործութեան միջնորդու-
թիւնը չէ կարողանում ուժեղ, զգալի կեր-
պով ազդել Ռուսաստանի տնտեսական ա-
ռաջագործութեան վրա: Ոչինչ չէ փոխվել
իրական կեանքի մէջ, — առում են շատերը,
— ամեն բան իր նախկին վիճակի մէջ է

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺԱՆՏԱՒՏԸ

(Ժողովրդի համար)

ձեռք տեղեկութիւններ անհրաժեշտութիւնը.
— Թաղականութիւն. — Առողջապահական ղեկավարներ.
— Պատմական և վիճակագրական ամբիոնի — Ժամա-
տարը Եւրոպայում. — Ժամատարի երեւոյթ Ռուսաս-
տանում և Կովկասում:

Ժամատարից կամ խօսքից մի երկիր
փրկելու համար ամենագործող միջոցն է այս հի-
ւանդութիւնների մասին հասարակութեան բոլոր
խաւերի մէջ ճիշդ և մանրամասն տեղեկու-
թիւններ տարածելը: Անցան այն ժամանակնե-
րը, երբ լաւ էր համարվում թաղացիկ ժողովը-
ղից այս վարակիչ հիւանդութիւնների մօտենա-
լը և նոյն իսկ երևալը, երբ իշխանութիւնները
արգելում էին բժշկներին ժամատարի ու խօ-
սքի անունը տալ, որպէս զի ժողովուրդը
զը սարսափի մէջ չընկնի: Ինչ էր լինում
այս անաղիի և կեղծ քաղաքականութեան հե-
տեանքը. այն որ ժողովուրդը զգուշացրած չը
լինելով՝ չարժանաւոր էր ասել իր հակա-
ռողջական պայմանների մէջ, որոնք, մանա-
ւանդ Ասիայում և Ռուսաստանում, պարբեր
հոգ են ներկայացնում ամեն տեսակ տարա-
փոխիկ հիւանդութեան համար: Եւստոյ երբ
այլ ևս անհնարին է լինում ծածկել սոսկալի

մնացել. հողի ներկայացուցիչները՝ գիւղա-
ցիներ, կարուստները՝ ամենին չը զգա-
ցին, որ կազմվել է մի նոր գիւղավարող մեծ
հաստատութիւն պետութեան գիւղատնտե-
սական կեանքում:

Ի՞նչ է պատճառը:
Պատճառը հիմնական է և նա զգա-
վում է նոյն իսկ միջնորդութեան շրջան-
ներում: Երկրագործութեան միջնորդը, որ
ինքը ծանօթ է թէ՛ գիտութեան և թէ՛
գործնական պահանջներին, իր ճանքի
մէջ չառ անգամ չեղտել է, թէ երկրագոր-
ծութեան միջնորդութիւնը կարող է մի
բան առաջացնել այն գէպում միայն, եթէ
տեղական ոյժերը կը սկսեն գործել, և
այդպիսով միջնորդութիւնը և տեղական
գործողը կաշաղցեն միմեանց՝ հասնելու
ընդհանուր նպատակին: Բայց որպէս զի տե-
ղական գործողը առաջադիմի, հարկաւոր
է, որ գեղեցիկ պլանները, գիւղական
նոր գիւղերը և կուլտուրայի զարգացումը
դառնան այդ գործողի սեփականութիւն:
Այդ մի կողմից, երբ միւս կողմից հարկա-

աղէտի երևալը, երբ ժողովրդի մէջ ակներև
է լինում թիշամու ներկայութիւնը, այն ժամանակ
յանկարծ սարսափը տիրում է ամբողջ երկրում
և յուսահատութեան մէջ զգում անօգնական ժո-
ղովուրդը: Համաճարակ խօսքից և ժամատարի
տարածվելու պատճառով ժողովրդի մի
հատկին կոչող է ներկայացնում այդ սխալ ըա-
ղաքականութեան կորստաբեր հետևանքների վե-
րաբերումը:

Մի թշնամու հետ կուսելու համար անհրա-
ժեշտ է ծանօթ լինել նրան, լաւ ճանաչել նրա
ոյժերը և իմանալ, թէ ինչ գէշերով է պատերազ-
մում նա, մի և նոյն ժամանակ լաւ ըմբռնել
նրա թույլ կողմերը, որպէս զի նոր լինի պատ-
րաստվել նրան զիմադրելու և թող կողմը հա-
րուածելու համար:

Ժամատարը ժողովրդի աչքին մի միջոցա-
րարիչ ճիւղ է երևում, որ ամեն ինչ խորատկաւ
էր ճանաչարհին, որ մաս է տարածում հողա-
մոլորներ իր չորջրը և որին ոչ մի ոյժ չէ կարող
զիմադրել: Երբ այսպիսի մի գաղափար է տի-
րում մի երկրում, այդ երկրի կորած է, որով
հետև ժողովուրդը ամեն ընդլիմադրութիւն անօ-
գուտ է համարում, ցատումը ընդունվում է իբրև
Աստուծոյ ուղարկած պատուհան և ձեռները ծա-
լած իր ամբողջ ոյժը դնում է նախախնամու-
թեան վրա:

Պէտք է պարտաւոր ժողովրդին գիտակցաբար
վերաբերվել սպառնացող աղէտներին և այժման

ւոր է, որ տեղական գործողները կարողա-
նան կազմակերպվել և համախմբվել, միա-
սին ընկելու իրանց առօրեայ հոգսերը և
միասին, միահամուռ ոյժերով՝ գիւղագրելու
տնտեսական զարգացման խաչընդոտ հան-
դիսացող ծանր հանգամանքներին:
Միջնորդութիւնը մինչև այժմ որոնում
է և չէ կարողանում գտնել տեղական
կազմակերպչութեան և կարող է, որ
կարող է գիւղատնտեսներին եռանդուն
գործունէութեան մէջ զննել և իրական
կապերով կապել հողի ներկայացուցչին մի-
ջնորդութեան հետ: Ռուսաստանի ներքին
նահանգներում գեղատնտեսական մասամբ լը-
քացնում է այդ պահանջը և կարող է, մի
քանի բարեփոխութիւններ ստանալուց յե-
տոյ՝ հանդիմանալ իբրև տեղական ուժեղ
գործող իսկ այն տեղերում, ուր դեռ չը
կայ գեղատնտեսական կապեր
ինքն իր մէջ խեղդելով է ոչ թէ այն
պատճառով, որ նա կարողութիւն չունի
արտադրարկել, այլ այն պատճառով, որ
ապարդիւն է արտադրարկել, և կարելի
չէ լրացվում այդ արտադրարկութեամբ:

Այն մեծ վնասները, որ ստանում է այ-
դեղործութիւնը Կովկասում, հողի արդիւ-
նաբերութեան զգալի անկումը, որ արձա-
նադրվել է պաշտօնական հետազոտութիւն-
ներից, առաջ են բերել մի քանի թոյլ
փորձեր մաքաւելու նրանց դէմ, փորձեր,
որոնց գոյութիւնը, սակայն, չի զգացվում
իրական կեանքում:

Միջնորդութեան մէջ գումարված այս
տարակա խորհուրդը մանրամասնորէն ըն-
նեց տեղական կազմակերպչութեան գործը,
բայց նա մինչև այժմ իրագործութիւն չէ
ստացել իբրև օրէնսդրական մի ակտ: Մինք
կարծում ենք, որ այդ ծրագրած կազմա-
կերպչութիւնը կը լինի միայն մի նախնա-
կան գործողութիւն, որին պետք է հետեւի
երկրորդը, աւելի բնագործակր և էականը,
այն է գիւղատնտեսական կազմակերպու-
թեան մէջ մտնողու գաւառի ամենախոշ
անկիւնները, գործակցութեան հրաւիրելով
երկրի բոլոր երկրագործներին:

զէպըում պիտի բացատրել նրան, թէ ինչ է ժա-
նատարը, ինչով է սպառնում նա մեր երկրին, ինչ
է նրա ոյժը և որոնք են նրանից պաշտպանվելու
միջոցները: Երբ հասարակութիւնը կը հասկանայ,
որ ժամատարը, ինչպէս և խօսքի, տանում է
զոհներ այն չըմբռնելով, որը պարունակ է հակառո-
ջական պայմաններում, երբ կիմանայ, թէ որ-
քան ինքն է վախենում ժամատարից, այն-
քան և ժամատարը վախում է մաքրութիւնից.
այն ժամանակ նա կը հասկանայ, որ սա երկըն-
քից ուղարկած պատիժ չէ և կարելի ու հարկա-
ւոր է կուսել նրա հետ:

Մենք կաշխատենք տալ ժողովրդին այս ճիշդ
տեղեկութիւնները ժամատարի մասին:

Ժամատարի սկիզբը կորչում է հնութեան
մէջ: Մի կողմ թողնելով հին դարերի համաճա-
րակները, որոնք չեն կարող մեզ չառ հետաքրք-
րել, մի քանի խօսք ասենք XIV դարի սոսկա-
լի համաճարակի մասին:

1337 թվին երևում է Եւրոպայում մի սոսկա-
լի տարախոսիկ հիւանդութիւն, որը միջնորդաւոր
զոհներ է լալիւում, և որը յիշատակում են թէ
պատմաբանները և թէ բանաստեղծները. — այս
տարախոսիկի շահ ցան էր: Այս անունը ստա-
ցել էր ժամատարը այն պատճառով, որ դիակ-
ները սկսում էին: Նա սկսվել էր Չինաստա-
նում, Հնդկաստանում և անցնելով Պարսկաստա-
նի, Կովկասի և Ռուսաստանի վրայով, անլուր

ՖԻՆԱՆՍԱՅԻՆԵՐԻ ԺՈՂՈՂԸ

Երեքշաբթի, յունվարի 9/21-ին, Պարիզում
տեղի ունեցող մի նշանաւոր միտինգ, որ
կազմվել էր ֆրանսիական ակադէմիկ վանտալը:
Ընդարձակ դահլիճը լի էր հազարաւոր ունկըն-
դիւններով, որոնց թում կային չառ միջնորդ-
ներ և զիպոմասներ, ակադէմիկներ, գործըն-
եր և հրապարակախօսներ: Եստրադի վրա կային
Վոլիւն, Լըրուա-Բօլիէ, Ժօզէֆ-Բէյաւի, Անրի-
Լաւլեան և ֆրանսիական մաթի միւս աստղերը:
Նախագահում էր կոմս Գը-Միւն: Գահինի պա-
տերից մէկի վրա կախված էին երկու ջարակչ-
ներ. մէկը Հայաստանի քարտէզը, ամբողջովին
ծածկված կարմիր բիծերով, որ նկատողական
կերպով ցոյց էր տալիս այն նահանգները, որ
տեղ հայերի արհմը թափված էր գետի նման,
միւսը՝ թուանշանների լեզուով խօսում էր դո-
հերի թւի մասին: Ահա այդ քարտէզը:

Սպանութիւնները հարկւրամեակ
Թիւրքիայում

1822-ին, կոտորվեցին յոյներ	50.000
1850-ին՝ նետաորականներ և այլք	10.000
1860-ին՝ մարտիկներ և այլք	11.000
1877-ին՝ բոլորները	10.000
1894—96-ին՝ հայեր	300.000

Ընդամենը կոտորվել են 381.000

Բանալով նիստը, կոմս Գը-Միւնը արտաա-
նեց մի համառօտ ճառ, որի մէջ բացատրեց,
թէ ինչ են ասում այդ թուանշանները քրիստո-
նեաների խղճամասերին: Ապա սկսեց խօսել հըռ-
չակաւոր պատմաբան, ակադէմիկ վանտալը:
Վանտալ իր գեղեցիկ ճառի մէջ ի միջի այլոց
ասաց.

«Եւրոպան իրաւունք չունի անտարբեր հան-
դիսատես մնալու: Բերլինի դահլիճի 61-րդ
յօդուածը պարտաւորութիւններ է դնում նրա
վրա՝ սուլթանի խոստացած ըլֆօրմների գործա-
րութեան վերաբերմամբ: Սուլթանը երբեք իր
խոստումները չէ կատարել. ընդհակառակը
հայերին կոտորում էին նրա հրամանով և հա-
ւաստի էին, որ անպատիժ կը մնան: Ի-
րաւագիտական կողմից Եւրոպայի իրաւունքների
մասին որ և է կառված չէ կարող լինել: Նա

ոյժով մտել էր ֆրանսիա, Գերմանիա և կոտա-
րելով Եւրոպայի բնակիչներին՝ անցել էր Անդ-
լիա և Սկանդինավեան թերակղզին: Եւրոպան
այն ժամանակ ունէր ոչ աւելի քան 100 միլիոն
բնակիչ, և այս թւից 25 միլիոնը, պատմաբաննե-
րի ասելով, դո՛ւ դնալու շահ ցաւին: Եթէ Հռօ-
մի պապ Կլեմենտ VI ի ժողոված տեղեկու-
թիւններին հաւատարմ, աշխարհիս ընդհանուր
կոտորածը այս համաճարակի միջոցին եղել է
մօտ 43 միլիոն: XV, XVI և XVII դարերում
ժամատարը չառ անգամ այցելում է Եւրոպան,
բայց նրա ոյժը գնալով նուազում է, տարած-
ման չըմբռնելով գնալով փոքրանում է, յետոյ
նա բուն է դնում մի քանի տեղերում, որտե-
ղից էլ վերջապէս աշուղտում է դուրս վաւղել
նրան:

Վերջին համաճարակը Անգլիայում երևում է
1665-ին, և տանում է 68000 զո՛հ ու հանգում է
երեկ ընդմիջու: Եւ նոյն ժամանակամիջոցից այլ
ևս չի յիշատակվում ոչ մի համաճարակ Եւրօ-
պայի կենտրոնում: Այնուհետեւ, ճշմարիտ է, ժա-
նատարը մտնում է Եւրոպա նաւերով, և դուրս-
նում է տեղական հիւանդութիւն ծովագրայ
քաղաքներում, բայց համաճարակը չի կարողա-
նում տարածվել Եւրոպայի խորքերը և տանա-
նախալվում է միայն ծովագրայ նահանգներով:
Այսպէս է եղել 1722 թվի Մարսել և Տուլօն
ծովագրայ քաղաքները և նրանց չըմբռնելու ստա-
կալի համաճարակը, որը հարկւր հազար զոհեր

պաշտօնական լիազորութիւններ ունի հայերին պաշտօնական համար Բայց վերջին տարիներս Եւրոպայի չէր կամենում կամ չէր կարող իմանալ թէ ինչ է կատարվում Մի տեսակ լուս. դաւադրութիւն էր սարքած հայերի դէմ: Եթէ չը լինէին մամուլի մէջ բարձրացող ձայները, Ֆրանսիայում ոչ մի բան չէին իմանայ եղածի մասին, որովհետեւ կառավարութիւնը ոչինչ չէր հաղորդում իսկ պարլամենտը ոչ մի հետաքրքրութիւն չէր ցոյց տալիս իր անգործունէութեամբ Եւրոպայի, մասնաւոր Ֆրանսիայի, մեղաւորից եղաւ այն ոճիւններին, որ գործում էր «կարմիր սուլթանը» կամ, ըստ Գլադստօնի «մեծ մարդասպանը»:

Հռչակաւոր պատմաբանին ժողովը ոգևորված օվաքիանքը արեց:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Օ Ր Է Յ Օ Ր
VI

Մեր կին-գործողների շարքերը դատարկվում են: Միմեանց յետից, մի քանի տարիների ընթացքում, մենք կորցրինք այնպիսի հայուհիներ, ինչպէս տիկին Մարիամ Մէլքե-Աղամալեան-Արծրունի, տիկին Կատարինէ Եւանդուկեան, տիկին Նատալիա Տէր-Մարկոսեան-Միքայելեան, տիկին Լիդիա Թամազեանց, տիկին Թամարա Աղամեան-Ներսիսեանց, որոնցից իւրաքանչիւրը, որոշ ասպարիզում, գործունէութեան յատուկ մասի մէջ ներկայացնում էր աչքի ընկնող բացառութիւն՝ հայ կանանց միատեսակ, նոյն իսկ անշարժ և թմրած մասսայի մէջ:

Նախկին գործողները դնում են, բայց նրանց տեղ երևան չեն գալիս նորերը, թէև ներկայ պայմանները աւելի նպաստաւոր են աչքի ընկնող կին-գործողներ պատրաստելու համար, և ինքը հայոց կենսաբան այժմ աւելի քան երբ և ինչ կարելի ունի եռանդուն, յափշտակվող գործիչներ:

Տարիներ են անցնում, մեր օրերդները արտասանման են դնում և վերադառնում, կանանց համար գործելու նոր ասպարէզներ են բացվում,—բայց և այնպէս մեր կանանց շրջանից դուրս չեն գալիս փոքր ի շատ խոշոր գործողներ, որոնք ընդունակ լինէին իրանց գործունէութեամբ մի հետք թողնել կենսաբան մէջ, հանդիսանալ իրեն որ և ի իրենց անձնուրէր սպասաւոր: Նոյն իսկ մեր դարական ասպարիզի վրա, ուր մեր ինտելիգենտ կանայք շատ բան կարող էին չինել իրեն լաւ թարգմանիչներ, իրեն մանկական դրականութեան զեկալարներ, իրեն վերջապէս մանկական անսպիրիտների հրատարակիչներ, համարեա չը կան աչքի ընկնող աշխատողներ (բացի տիկին Մարիամ Խատիսեան, որ մեզ տուեց մի քանի վէպեր), չը կան կին-գործողներ և թարգմանիչներ:

Տխրալի են, ձգմարիտ, երբ եղածները մեռ-

տարաւ, բայց սահմանափակված մնաց Պրովանս նահանգում որտեղ և հանգաւ:

Տասնութերորդ դարից յետոյ ժամտախտը չարունակում է յաճախ երևալ միայն այն երկիրներում, որտեղ առողջապահական պայմանները նպաստում էին նրա զարգացման,—այդ երկիրներն են Ասիան, Նիւիդուտը, Թիւրքիան և Ռուսաստանը: Եւրոպայի աղաւթից ժամտախտից, կարելի է վտանգ ասել, չնորհիւ առողջապահական պայմանների բարելավման: Եթէ այսուհետեւ երևան էլ այնտեղ համաճարակներ, նրանք երբեք այն ոյժը և ծաւալը չեն կարող ունենալ, ինչ որ ունէին առաջ:

Տասնութերորդ դարի վերջերում և ներկայ դարում ժամտախտը շատ անգամ երևացել է Նիւիդուտում և Աֆրիկայի ծովեզրում (2—3 տարին մի անգամ), եւրոպական Թիւրքիան չարունակում է մեծ զոհեր տալ այս համաճարակին այս դարի սկզբներում, բայց 1839 թվականից յետոյ այնտեղ էլ վերջանում ցաւը: Վերջին համաճարակը եւրոպայում վատեանկայի (Աստրախանի նահանգի) ժամտախտն էր, ուսումնական պատերազմից յետոյ (1879 թ.), որը սարսափ տարածեց Եւրոպայի վրա, բայց սրը բարեբաղդաբար սկսել ու տեղը հանգաւ:

Մեզ աւելի պիտի հետաքրքրեն այն համաճարակները, որոնք տեղի են ունեցել մեր սահմաններում: Դժբաղդաբար «Մշակի» էջերի սըղջութիւնը թոյլ չի տալիս մեզ առաջ բերել

նում, դուրս են գալիս շարքից, իսկ ներքին տեղ երևան չեն գալիս նոր գործողներ, նոր ոյժեր: Այդ տեսակ ամալութիւն, մանաւանդ այժմ, բոլորովին չի համապատասխանում մեր կենսաբան առաքին պահանջներին, որոնք անթիւ մշակչներ են պահանջում մեր իզական սեռից:

Խ. Մարտիան

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՅՕԳՈՒՏ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ

Այս վերնագրի տակ կը տպագրենք այն բոլոր նուիրաբուհիւնները, որոնք, թէ փողով և թէ հաշուետով, լինում են զանազան քաղաքներում և գիւղերում, յօգուտ թիւրքահայ քաղաքականներին: Այդ նուէրները, ինչպէս յայտնի է, յանձնվում են օստիկանութեան: Խնդրում ենք մեր թղթակիցներին մանրամասն տեղեկութիւններ հաղորդել բոլոր նուիրաբուհիւնների մասին:

- 1) Ներքին-Ախտայից մեր թղթակիցը հաղորդում է. «Այստեղ գաղթականներ չունենք, որպէս զի մենք էլ մեր կողմից օգնենք նրանց: Եղածներն էլ անցորդներ են, որոնք մի գիւղի մնալուց յետոյ՝ շարունակում են իրանց ճանապարհը դէպի կենտրոնական հարուստ քաղաքները: Արդ թիւրքահայ սրից և կոտորածից փախած հայ գաղթականների օգնութեան գործին մասնակցելու համար՝ մենք ևս մեր վազբիկ շրջանում հաւաքեցինք մի քանի թօփ կանայք: Հազնէլիք, այն է 247 արշին բուսաղէ, մանուշայ, կաւա և ալաւալ, և ուղարկեցինք Հայոց Բարեգործական ընկերութեան Երևանի վարչութեան ի գործադրութեան: Նուիրաբուհիւնն են՝ Մկրտիչ Կարապետեան 45 արշին բուսաղէ, Զ. Սինսեանց՝ 45 արշին, Բ. Բուսաղեանց՝ 40 արշին, Ս. Աւետիսեանց՝ 37 արշին, Ս. Յովհաննիսեանց՝ 30 արշին, Ռ. Տէր-Գրիգորեանց՝ 15 արշին ալաւալ, Զ. Մկրտիսեանց՝ 15 արշին կաւա, Կ. Զանիբէ-զեանց 10 արշին մանուշայ և Զ. Շիսեանց՝ 10 արշին: Բոլորը՝ 247 արշին:
- 2) Սիբիրի Տոմսկ քաղաքում հրատարակվող «Сибирский Вѣстник» լրագրի № 13-ի մէջ կարդում ենք. «Մեր խմբագրութեան մէջ ստացվեց պ. Գօր—Ենկոյից 12 բուրբի, յօգուտ վնասված թիւրքահայերի: Գրաւ հետ միասին նուիրատուն խնդրում է մեզ՝ հրաւիրել կարգաւ ընթերցողներին՝ հայերին օգնելու մասին, և ուղարկել այդ փողը կամ հայոց «Մշակ» լրագրի խմբագրութեան, Թիֆլիս, և կամ ամենայն հայոց կաթողիկոսի անօրինութեանը, Էլզիմաժին: Պ. Գօր—Ենկոյի խնդրել մենք կը կատարենք: Իսկ ինչ վերաբերում է շարունակել նուէրներ ընդունել յօգուտ հայերի, — մենք զբաղւմ ենք հրաժարվում ենք, և խորհուրդ ենք տալիս բոլոր նուէրները ուղարկել վերե ցոյց տուած մէկ կամ միւս հասցեով»:
- 3) Սամարկանդից հաղորդված է մեզ հետեւալը յունվարի 25-ից. «Այս օրերս, Սամարկանդի հայ կողմից ներկայացաւ զինուորական նահանգապետ կոմս Բոստուլիցին, խնդրելով

այստեղ Հայաստանի, Փոքր-Ասիայի, համաճարակների պատմութիւնը: Վրաստանի մէջ 1798 թիւին մի սաստիկ համաճարակ է երևացել, որը նորոգվել է 1802—1804 թիւին, հասնելով մինչև Գետիգիվիսի, և Մոզդուի (1806) և տարածվել է ամբողջ Կովկասում, հասնելով Կուրան, Ստաւրուպոլի և Աստրախանը, 1808-ին նա երևում է Նոյդաշենի և Արևադենի մէջ և տարածվում է մինչև Կասպից ծովը: 1810-ին համաճարակը նորոգվում է Վրաստանում, տարածվում է մինչև Թիւրքիայի (ժամանակակից) սահմանը, յետոյ ժամտախտը բռնում է լեռնային Կովկասը, իջնում է վաղեկակազի հովիտը: Այս համաճարակը համարեա անընդհատ տևում է մինչև 1816 թիւը: Մի և նոյն ժամանակ ժամտախտը զոհեր է տանում Ասիական Թիւրքիայում: 1809 թիւին նա երևում է Երզրումում, 1810-ին Բայրութի և Բաթումի, յետոյ նա անցնում է Տրապիզոն, տարածվում է Ժովի եղեղով, հասնում է Ալաշկալա, Կարս, 1812-ին կրկին երևում է Թիֆլիզում որտեղից անցնում է Վաղիկակազ, Մոզդուի, Գետիգիվիսի: 1824-ին ժամտախտը կրկին բարձրացնում է իր գլուխը Երզրում, 1827 թ. նրան զանում ենք Երևանում, Սև ծովի ափերին,—իսկ 1828-ին Կարսում: 1830-ից մինչև 1833 թ. Տրապիզոնի մինչև Կարս ամբողջ երկրում հիւսնութիւնը տիրում էր: Այս ժամտախտը ընդհատուհեմբով մնաց երկրում մինչև 1840 թ. 1841-ին նա հասնում է Բիթլիս, Կարս-Հիսար, մինչև

Թոյլտոբիլ հանդիսակութիւն սկսել յօգուտ հայերի: Այսմը յարգեց այդ խնդիրը Թոյլտոբիլցի, օստիկանութեան հետ միասին, հանդիսակութիւն բանալ ամբողջ Թուրքիստանում: Այս օրերս զինուորներ կը ձեռնարկեն հանդիսակութեան:

4) Վաղեկակազից մեզ հաղորդում են. «Յունվարի 28-ին այստեղի հայերի նախաձեռնութեամբ, տեղական ուսուցիչ դերասանական խումբը, Նիկոլէին զեկալարութեան ներքոյ, հայ-գաղթականների օգտին տուեց մի ներկայացում, քաղաքային թատրոնում խաղացին «Сорок и Ворон» Սոմաթուի դրաման, և «Молчаніе» փոքրիկ: Թատրոնը լի էր հանդիսականներով: Ներկայացման վերջը, ի նշան համակրութեան, հասարակութիւնը պ. Նիկոլէինի նուիրեց մի ոսկեայ փետոն: Ընդհանուր մուտքն էր 449 ր. 15 կ., կամաւոր նուիրատուիւններ մօտաւորապէս 151 ր. ընդամենը 600 ր. 15 կ. ծախքը 225 ր., դուտ արդիւնք մնաց 375 ր. 15 կ. ապէս, որը պէտք է ուղարկի Կովկասեան կառավարչապետին»:

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ ՌԱԹՈՒՄԻ ՄԷՋ

(Նամակ Թաթուկցի)

Ձը նայելով, որ Բաթումը գաղթական հոսանքի բերանն է և նրա բնակիչները անպատեհ են հաղաբաւոր թշուառներ լինակի, այնու ամենայնիւ, եթէ հաշուելու չը լինենք Բարեգործական ընկերութեան ձիւղի թիւթի նպատակները, մինչև այսօր այստեղի հասարակութիւնն կողմից եղած նպատակները այնքան չնչին և աննշան են, որ յիշեն անգամ ամօթ է: Ինչպէ՞ր բացատրել հասարակութեան այդ անտարբերութիւնը (եթէ չաւենք մեռելութիւնը): Մեր կարծիքով, միայն նրանով, որ ընկերական կենսաբան հազիւ թէ որ և է տեղ այնպէս անջատված և չիօթ տեսարան ներկայացնէր, որպէս այստեղ:

1878 թիւից յետոյ, երբ ուրիշների հետ հայերն էլ սկսեցին աղաւթ կերպով մուտք գործել Բաթում, անցել է ամբողջ 18 տարի: Այդ ժամանակամիջոցում հարկաւոր միլիոններ է անցել այստեղի հայերի ձեռքով, շատերը հասարակ կանայի ծախելուց այժմ հաղաբուրի են տիրացել, բայց ընկերական կենսաբան չէ փախել, չէ կազմվել հասարակական միաւորող մի օղակ, որի չնորհիւ կարելի լինէր մի որ և է բարենպաստել գործի հիմք դնել: Ընդհանրապէս, ամեն մի նոր միտք, որ ուղեցնել է իրականաւոր, հանդիպելով քահանայական և այլ նման յիմար վէճերի պատճառով ծաղած անհամբարախոսութեան, անմիջապէս խեղդվել է: Մի հասարակ դրաւարան-ընթերցարանը, որ ներկայ րօպէին ամենամեծ միլիթարական հիմնարկութիւնը կը լինէր հարկաւոր անգործ և ընթերցասէր գաղթական հայերի համար,—այդ էլ չը կայ:

Այսպիսի պայմաններում՝ հաղաբաւոր գաղ-

վան, իսկ 1843-ին նա տարածվում է կրկին Երևանի և Ալեքսանդրոպոլի գաւառները: Արանից յետոյ մենք այլ ևս ժամտախտ չենք տեսել: Պարսկաստանում (Աղբէջյան) Գրգաստան, Խորասան, Ռէշտ տարածված համաճարակները, որոնք տեղի ունէին 1863, 1870, 72, 78, 83-ին, չեն անցնում մեզ մօտ, ինչպէս և Ռէշտի 1877 թ. ժամտախտը, որը մի քանիսներին կարծիքով վատեանկայի համաճարակի սկիզբն է կղել: Այժման մեզ սպառնացող ժամտախտը գալիս է Հնդկաստանից, այս երկրում և Զինաստանում (Ռանսան, Կանտօն, Հօնգ-Կօնգի նահանգներում) նա յիսունական թվականներից բուն է դիւլ և ամեն րօպէ սպառնում է Պարսկաստանին, Թիւրքիային, Կովկասին և Ռուսաստանին:

Երկար ժամանակ Նիդունի համարվում է ժամտախտի բունը, իսկ Գանգէսը—խօլբայի: Այժմ այս վերջինը Նիդունից այդ պատիւն էլ իւրեց: Հինգ տարի առաջ նա մեզ չնորհեց խօլբայ, այս տարի ուղարկում է ժամտախտը:

Ինչ է ժամտախտը. Ժամտախտը մի տարափոխիկ-վարակիչ (կաշու-դական) հիւանդութիւն է, որը հիւանդից անցնում է առողջին, և իրեն տարափոխիկ հիւանդութիւնն է, գիւղից գիւղ, քաղաքից քաղաք, երկրից երկրի անցնելով, կարող է իր ծննդավայրից տարածվել շատ հեռու, օրինակ, Հնդգ-կաստանից—Անգլիա: Նոյն ձևով տարածվում է և խօլբայ: Ամենաինքն ժամանակներից, փորձը

թական օրերի մերկութիւնը, հիւանդութիւնը, քաղցը, անտէրութիւնը մի սրտաճմիկ տեսարան է ներկայացնում: Իսկ այստեղի հասարակութիւնը դարձեալ շարունակում է նոյն անտարբերութեամբ, նոյն սառնասրտութեամբ նայել այդ բոլորի վրա, ինչպէս որ մինչև օրս վերաբերվել է դէպի ամեն մի ընկերական և հասարակական գործ: Հայաստանցի հայ կինը, որ ամօթից չի կարող փողոցով համարձակ անցնել, այսօր անտէր մնալուց, սյւլ և որը մնացած երկեսները ու քաղցը ստիպել են նրան ամբողջ ժամերով նստել կիրակնօրեայ վաճառանոցում (հարմարկա) և ունեցած չունեցած հին ու նոր լաթերը ծախել, իսկ շատերը այդ էլ չունենալով, արդէն սկսել են մուրալ:

Եւ այդպիսի րօպէներում այստեղի հայերի կողմից միլիթարական խրախուսանքը ստիպաբար լինում է այն, որ անմիջապէս հարցնում են, թէ ինչու նրանք աներում ծառայութեան չեն մտնում, այլ մուրացկանութիւն են անում: Բայց ո՞վ է տեղ առողջ...

Պակաս ներութեան մէջ չեն և աղամարդ գաղթականները, անտէր պայմանները և անծանօթ լեզուները ամեն ինչ դժուարացնում են նրանց համար. երիտասարդներից մէկը կամենալով փողոցներում միք գնահատել, մի քանի խնձոր և ընկուղ էր անել թաղալի մէջ և սլըտըտում էր փողոցներում, բայց ընկուղին «արեւ» կանչելու տեղ, նա կանչում էր խորօշ, արախ արախ... Մի քանիսներն էլ սկսել են թեթեւաբանութեամբ բռնալ մորթալաճառի, մանրմուկներին և այլն, բայց նոյնպէս տեղական լեզուներին և օրէնքներին անմասօթ լինելով, յաճախ վնասներն են կրնարկում, շատ անգամ էլ թաւառաշրջիկ չարամիտ մարդկանց հնորհիւ աննախաձեռն է դրանց վիճակը:

Գ. Գրիգորեան

ՄԱՏԵՆԱՐՈՒԹԻՒՆ

«Արօր» պատկերազարդ օրացոյց 1897 թվ.— Բաղու, 1896.

Տպագրութիւնը մաքուր է, պատկերները (նշմարեան, Բաթայի, Թաղաբուհեան տեսարաններ, Նալբանդեան) շատ գեղեցիկ են տպված: Օրացոյցին կցած են մի քանի յօդուածներ. 1) «Հայերի դրութիւնը Պարսկաստանում»—մի վայրիկերայ աշխատութիւն, որ լուրջ և բազմակողմանի ուսումնասիրութիւնն է, այլ աւելի նըման է պօլեմիկական յօդուածի, անմասն հեղինակը անանձնակ հայտնաբերել է թաւառաւ ալ ու ձախ, հիմնովում լսկ այն տեղեկութիւնների վրա, որոնք տպված են եղել «Շաւիղ» լըրաբանիւր երեսում՝ յօդուածադիրը մի զուլս լեկլաններ է անում «Շաւիղի», այն էլ միայն 1895 թիւ «Շաւիղի» հասցին, այնպէս որ չէ մոռացել նոյն իսկ «Շաւիղի» խմբագրին (?) ծե-

ապացուցել է ժամտախտի այս տարափոխիկ և վարակիչ յատկութիւնը, որը միշտ սարսափ է տարածել աղբերի մէջ՝ հիւանդութեան մօտենալիս: Ամբողջ քաղաքներ ամայանում էին, մարդիկ դուրսն առած փախչում էին ահաւել թըշնամուց, և ապաւինում էին լեռները, անտառները: Վարակիչ է ոչ միայն ինքը հիւանդը, վարակիչ է (գուցէ աւելի եւ) նրա զիակը, վարակիչ է նրա հագուստը, կահ կարանքը, նրա գործածած իրերը: Ժամտախտի պատմութեան մէջ բաղժաթիւ օրինակներ են բերվում այս ապացուցելու համար: Ահա մի ամբողջ ընտանիք կոտորվում է վարակվելով մի որ և իրով, որը նա վեցերել է հիւանդի մօտից: Տուգնում հիւանդի մահից յետոյ՝ նրա իրեղէնները վերցնողները բոլորը վարակվելին: Գրաստի պատմում է, որ Ֆրանսիայի մի մենաստանում, որտեղ ստացվել էր մի արկը ժամտախտաւ իրեղէններով համարեա բոլորը վարակվեցին ու մեռան: Տրին-Կովկէլին պատմում է, որ մի արկում քսան տարի առաջ պահված էին այն պարաները, որոնցով փոսն էին իջեցրել ժամտախտից մեռածներին. այս արկը բացող ծառան վարակվում է ժամտախտով ու մեռնում, և սկիզբն է դառնում մի համաճարակի, որից կոտորվում է 10.000 մարդ: Մենք զեռ կը վերադառնանք ժամտախտի այս վարակիչ զօրեղ յատկութեանը:

Բ. Վ. Արծրունի

քացաւ, գոնէ այժմեան պայմաններում, և ես էլ չարունակ երկու ամիս չը կարողացայ ոչ մի օգնութիւն հասցնել թշուառ զաղթականներին: Գարձեալ Բարեգործական ընկերութիւնը, չը նայեալ իր սուղ միջոցներին՝ օրական 100—150 մարդ կերակրելուց յետոյ, մտածեց թշուառ հիւանդներին մասին, քնն հրահրեց իւրեւ ընկերութեան բժիշկ խնամել զաղթական հիւանդներին, զնեղով իմ տրամադրութեան տակ մի որոշ գումար դնելով և ուրիշ ծախսերի համար Սկսած յունվարի մէկէն ես ամէն օր այցելում եմ հիւանդներին, որոնց թիւը մինչև այսօր հասել է 33-ի:

Այսպիսով, կրկնում եմ, չորսիւ պարահանդէսի մի քանի կարգադրելներ՝ զաղթական հիւանդները տարվայ ամենացուրտ եղանակին զրկված մնացին յարմար բնակարանից, անհրաժեշտ կերակրից և նոյն իսկ տարակարգ բժշկական օգնութիւնից, թափված լինելով զանազան հակառողջական շինութիւններում, ամենավատ պայմաններում, որոնց պատճառով մի քանի թշուառներ էլ զոհ գնացին: Գարնան մօտենալու պատճառով, երբ տարափոխիկ հիւանդութիւնները զարգանալով կարող են բոլորին վարակել՝ կարել է զգացվում գէթ այժմեանից հոգալ մի հիւանդանոց բանալու մասին. Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի վարչութիւնը պատրաստակամութեամբ է յայտնում ձեռնարկել այդ գործին, եթէ միայն դրամական բաւականաչափ նպաստներ ստանայ: Եթէ քաղաքում այսպիսի մի հիւանդանոց բացվելու լինի՝ կարելի կը լինի քաղաք տեղափոխել և դառնի հիւանդներին, որոնց թիւը շատ է և որոնք զրկուած են բժշկական օգնութիւնից: Յանկալի է, որ ձեռնհաս անձինք և ընկերութիւնները օգնութիւն հասցնեն տեղական վարչութեանը՝ այդ վերին աստիճանի կարեւոր հիմնարկութիւնը բանալու համար:

Բժիշկ ուսանող Հայրապետեանց

ՆԱՄԱԿ ԽՐԱՍԳՐՈՒԹԱՆ

Մեզ հաճելի է տպագրել մի ուսու օրիորդից, Աննա Ուլանովա, ստացած հետեւալ նամակը, որ նա ուղղել է մեր խմբագրութեանը, 55 բուրլու հետ միասին, լսողներով տպագրել:

Տ. Թենցիսկայ, 18-го января

М. Г., 13 числа текущего января, я вамъ отправила 55 руб., собранные мною въ пользу несчастныхъ армянъ. Въ письмѣ моемъ было сказано, что по моему предложению были устроены любительскій спектакль, но такъ какъ часть любителей, уже послѣ спектакля, объявила свое нежеланіе, чтобы все пожертвованіе пошло въ пользу несчастныхъ армянъ, то я возвратила деньги обратно нежелавшимъ внести свою лепту въ пользу голодающихъ армянъ, и вновь собрала по подпискѣ пожертвованія, изъ коихъ жертвователи согласились вычислить расходы по устройству спектакля, а остатокъ препровожденъ вамъ. Прошу напечатать нижеприведенный списокъ жертвователей: Карапетъ Шахъ-Назарьянъ 10 р., Вофакъ и Панаконостатини (греки) 10 р., Егоръ Шахъ-Назарьянъ 8 р., Тигранъ Шахъ-Назарьянъ 8 р., Симеонъ Шахъ-Назарьянъ 5 р., Улановъ 6 р., Асатуръ Сатуянъ 5 р., m-elle Руднева 2 р., m-elle Альянахянъ 1 р., Прозоровскій 1 р., Манучарьянъ 1 р., 10 к., Улукханынъ 75 к., Пако Нагорюковъ (черкесъ) 75 к., Джагемирьянъ 50 к., Поповъ Н. 50 к., Х. 40 к., Кучеръ 20 к., NN 4 руб. Итого 66 р. 20 к.; израсходовано по любительскому спектаклю 11 р. 20 к., остается 55 руб., каковая сумма препровождена вамъ. Прошу передать ее надлежащему начальству, для употребленія ихъ по назначенію.

Анна Уланова

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» այս համարը բաղկացած է 6 երեսից:

Մեր հասարակութեան լաւ ծանօթ ալ. Նորայր Բիւզանդ, որ ապրում է Եփեսոսի Ստոյհիւմ քաղաքում, սիրալիր կերպով յանձն առաւ լինելու «Մշակի» յատուկ թղթակցի—ներկայացուցիչ Ստոյհիւմի Սկանդինավեան ցուցահանդէսի ժամանակ, որը պէտք է բացվի մայիս ամսին:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի քաղաքային դուման, ափին լիւիա Թամաշեանի յիշատակը յարգելու համար, երէկ կայացրեց հետեւալ որոշումները. 1) քաղաքի կողմից պատկ զննել հանգուցեալի դագաղի վրա. 2) կախել նրա պատկերը Արհեստագիտական դպրոցում 3) որ

բոլոր ձայնաւորները in corpore ներկայ լինեն հանգուցեալի թաղմանը՝ քաղաքապետի և ուսուրաւայի անդամների հետ միասին: Գուման յունվարի 31-ի նիստում, յարգեց հանգուցեալ ափին լիւիա Թամաշեանի՝ ոտի կանգնելով:

Ամերիկայի նշանաւոր կին-գործողներից մէկը, օրիորդ Ալիս Բլեքուէլ, երկու տարի առաջ, թարգմանել էր Ռաֆայէլ Պատկանեանի ոտանաւորները անգլիերէն և հրատարակել առանձին գրքով: Այժմ Զօն Բեդել յարմարեցրել է այդ ոտանաւորներից մէկը, այն է՝ «օրորոցի երգը»՝ զաշտամուրի վրա անկուս: Երբ կրում է Armenian Cradle Song անունը և արժէ 25 անոտ (մօտ 50 կողէկ):

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի օստիկանապետ Մատթիկի իր ձեռքի տակ եղած գումարներից 300 բուրլի յատկացրեց Սօլալի էժանագին ճաշարանին:

Մի օֆիցեր դեռեղել է «Кавказъ» լրագրի յունվարի 31-ի համարում մի յօդուած, «Թիւրքացի դօրքը» վերնագրով: Հետաքրքրական մի տեսութիւն անելով օսմանեան պետութեան զինւորական ոյժի մասին՝ յօդուածագիրը յայտնում է, որ թիւրքացի դօրքի թիւը՝ պատերազմի ժամանակ հետեւեալն է. «բառայիւս»—1054, էսկաւորս»—177, բառարեյա»—226, թիւքանօթներ»—1356, օֆիցերներ»—30270, զինւորներ»—978025, ձիեր և բեռնակիր անասուններ»—100725: Համարել զնրերի թիւը համարում է 80-ի, իսկ համարել ձիերի թիւը՝ 80000 է: Խօսելով թիւրք զինւորի բնութեան մասին՝ յօդուածագիրը նկատում է. «Իր դիմացկունութեամբ, փոքր պահանջներով և անպայման հնազանդութեամբ թիւրք զինւորը բաւական մօտիկ նման է ուս զինւորին: Համարեա բոլոր թիւրք զինւորները անգրագետ են: Թիւրքերում շատ անգամ մտթէտարիֆը և զայնապէս անգրագետ են լինում, ինչ կայ զարմանալու, որ բոլոր թիւրք զինւորները նոյնպէս անգրագետ են: Չէ՞ որ Թիւրքիայի ոյժը—տղիւտութեան մէջն է:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Անցեալ օրը տեղացի չորս թուրքերի մէջ՝ մի կողմից—Արուզար փանաճ օղլի, իսկ միւս կողմից՝ երեք եղբայր Ազա Հուսէյն, Մովսիս և Ալի Հուսէյն Գալաշի որդիներից մէջ՝ սարսափելի կռու սկսվեց ժառանգական անշարժ կայքերի բաժանման առթիւ: Առաջինը Արուզար, որ միայն թիւթի վերք ստացաւ, իր երեք հակառակորդներին ծանր վէրքեր տուեց: Մովսիսն միւս օրը մեռաւ. իսկ Արուզար և աղա Հուսէյնին քննիչը բանտարկեց: Երեք եղբայրները փոքրահասակ են 12, 16, 20 տարեկան, իսկ Արուզարը, որը նրանցից աւելի ուժեղ է, հազուադէպ տակից, ինչպէս ասում են, հազած ունէր դրան, և այդ պատճառով նա անվնաս է մնացել:»

ԱԼԷԲԱՆԻՐՈՒԹԻՅՈՒՆՑ մեր թղթակցը գրում է. «Ալեքսանդրապոլեցի իր լուսման ցցեց, նա այժմ իրականում ունի իր դուռը ամուր փակելու գոյժ աղբարողի առաջ: Եւ ինչ է ուղում անրեւս զաղթականը, չէ որ ինքը արդէն տուել է: Այդպէս են ասում մեր քաղաքում ումանը կրում տեղի ունեցած պարահանդէսից յետոյ, որ 2000 բուրլի մուսը սնեցաւ: Նա տուեց, բայց չէ որ դեռ ոչինչ չէ ստացել տարաբաղ ճաշածականը, ինչ անէ նա մինչև այդ ցանկալի րօպէն... Ահա, ընթերցող, մին դուրս թափում, որի մէջ գտնվում ենք մենք և մեզ մօտ ապաստանած հիւրերը: Մի քանի օր առաջ նրանցից մի ստուար բաղմութիւն փողոցում չըջապատեց մեզ. նրանք շատ դառն գոյնեղով նկարագրեցին իրանց գրութիւնը կատարված հանգանակութիւններից յետոյ: Նրանք ասացին, որ այժմ իրանք էլ չեն տալիս ոչ մի «փշուր հաց» ոչ բրինձ ու կորեկ: և ոչ էլ իօպէկ ու համաշխարհային, այսօր Ալեքսանդրապոլում ապաստանած զաղթականը աւելի անօգնական և քաղցած է, քան երբ և իցէ...»

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են յունվարի 26-ից. «Երկու օր չարունակ նորից ձիւն եկաւ, փողոցները թաղուած են անաքին ձիւնի չեքտի տակ, ամիս ու կէս չարունակ սահնակներ են բանում: Ցրտերը սարսափելի են: Երկնակամարի

թուխը այսօր անցաւ, և այսօր միայն տեսնում ենք արեգակի երեսը:»

ԲԱՆՈՒԹԻՅ Հաղորդում են «Нов. Обозр.» լրագրին, որ այնտեղ ուսուց և հայոց դերասանական խմբերը երկու ներկայացումն են տուել թիւրքահայ զաղթականների օգտին, բայց թէ ուսուց և թէ հայոց ներկայացման միայն մի քանի տեսնեալ բուրլու տոմաս է ծախվել:—Ամօթ Բազուկի փողի տապալկներին, ամօթ շամպանեան գինու մէջ լողացող շնոր մարդկանց, որոնք Բազուկի մէջ միմիայն անբարոյականութեան և անառակութեան են երկրպագում:

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են. «Կտակներ անելը կամաց կամաց մուտք է գործում նաև դիւղերը: Նորագոյն զիւղում մի այլի կին կտակել է իր ունեցածը գիւղի եկեղեցուն, և մի կամուրջ նորոգելու համար: Ասում են՝ կնոջ թողած գումարը հասնում է 2,000 բուրլու:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Revue D'Orient» լրագիրը հաղորդում է, որ սուլթան Աբդուլ-Համիդը Կոնստանտնուպոլիսում 75,000 պիստոլ տուել է յունաց տիեզերական պատերազմի 40,000 պիստոլ—հայ լուսաւորչական պատերազմ Օրմանեանին և 25,000 պիստոլ հայ-խաթիւնների պատերազմը Աշարեանին:

Լօնդօնից մեր թղթակցը մեզ գրում է. «Սուլթանի դէմ ձեռք առնելիք պարտաւորի միջոցներու վրա միայն «Թայմս» տեղեկութիւն կուտայ: Բոլորովին մէկ կողմ գրում է միջադէպին նաւաստիւմը Վօլթօրի առջև խաբխիւտ տալու զաղափարը: Խաբխիւտ զաղափար կրնայ ստատկապէս զրգուել, երբ խախիֆի մայրաքաղաքին մէջ երևան եւրոպական մարտաւարը, ու հիմայ անքան հոգածութիւն երևան կուգայ այդ զգացումը չանելու համար: Բայց հեռուոր նաւահանգիստներ կրնան ծառայել առաջադրուած նպատակին: Տրապիզոն, Կիւթաօն, Պէրսի, Խզմիր շատ նպատակաշարմար կը թուին: Եւ այս առժամայ դրանում պիտի միանայ, միշտ «Թայմս» խօսքին նայելով, մաքսային հասոյթներու դրանում:»

Յունվարի 24-ից Վիէնայից հեռագրում են «Standard» լրագրին հետեւեալը. «Դեպքանախորհրդին որոշումները շատ դժուար կը պահանջին. բայց յայտնվեցաւ թէ առաջարկուելիք բարենորոգումները այս անգամ գլխաւորապէս սահմանադրական բնոյթ ունին, պատկանելով եթէ կրնանք ասանկ ըսել, կառավարական սկզբունքին և ոչ թէ այս ինչ կամ այն ինչ նահապետի համար գործադրուելիք վարչական մանրամասնութիւններու: Սուլթանին բացարձակ իշխանութիւնը պիտի չափաւորուի, Իրան վերագրանելով իրեն նախկին հեղինակութիւնը: Պահանջուելիք բարենորոգումներուն ոգին այս է, և այդ բարենորոգումներուն գործադրութեանը գոնէ ժամանակ մը—հանելու իրաւունքը պիտի ստանան պետութիւնները: Ոչ—թրքական հանգամանք ունեցող ու և նոր հիմնարկութիւն պիտի չը ներմուծուի, այլ վերանորոգութիւն պիտի տրուի արդէն գոյութիւն ունեցող կամ երեւան գոյութիւն ունեցած և հիմա մոռացութեան մէջ ընկած հիմնարկութիւններու: Եթէ ասոնք գործադրուին՝ ան առեւ ինքնիշխանութիւն պիտի դառն մանրամասն բարենորոգումները, առանց եւրոպական պետութիւններու նոր միջամտութեան: Ոչ միայն կը պատահի, այլ և բացարձակօրէն ստույգ է թէ սուլթանը ընդդիմադրող ցոյց մը պիտի ընէ, թէ իր բացարձակ իշխանութեան համար առաջադրուած կըրձակ իշխանութեան համար առաջադրուած կըրձակութեան շատ չափաւոր ըլլայ: Եւ արդարեւ, եթէ չիմ խաբուած, բարենորոգումները շատ չափաւոր պիտի ըլլան եւրոպական, և մասնաւորապէս Արեւմտեան եւրոպական, երկիրներու տեսակէտով: Ինչպէս համար սուլթանը բացարձակօրէն պիտի իշխէ մինչև ուրիշ միահանգ պետութեան մէջ նախարարներուն մինչև աստիճան մը աղաւթութիւն ձգուած է իրենց ձեռնհասութեան չըրտարելի մէջ. եւ մասնաւորապէս և հայիւններու հրապարակութիւն տեղի կուենայ, ինչպէս նաև կան արդի կարգադրութիւններ:»

Լօնդօնից մեզ գրում են փետրվարի 4-ից (ն. տ.). «Այս օրուան թերթերը շատ կարեւորութիւն կընծայեն Բարիկի «Թան» օրագրին քաղաքական մէկ առաջնորդին, որ կըսուի թէ ուղղակի արտաքին գործերու նախարարն է: Ներքին գործերու նախարարն է: Սուլթանին կարեւոր կէտերը հեռագրուած են «Թայմս»-ին և «Ստանդարդ»-ին: Բարիկեան թերթը կը յայտարարէ թէ սուլթանը պէտք է յուսակար մնայ, եթէ կըսուէր որ պետութիւններու միջի միաբանութիւնը կը պակսի այս անգամ: Բարիկի օսմանեան դեպքանք հիմա կարող է իր վեհապետին ծանուցանել, թէ գործադրուելիք բարեկարգութիւններուն համար Ֆրանսայի և Բուլղարի արտաքին գործերու նախարարները որպիսի յատակ, վեհական և կորովալիր լեզուով խօսեցան:»

Բարեկարգութիւններու ծրագիրը գործադրելու միջոցներուն վրա խօսելով «Թան» կը յայտարարէ հետեւեալը. «Եւ հիմայ վեհական բանակցութիւնները սկսելու վրա են: Վսեմ ու ահաւոր վայրկեան մըն է: Թիւրքոյ համար, սուլթանին համար հասած է ժամանակը որ ընտրեն կամ կենք, կամ մահ. կամ բարեկարգութիւնները, որոնք միայն կրնան օսմանեան կայսրութեան տալ կեանքի նոր պայմանաւոր մը, ապահովելով իր հպատակներուն կենսական իրաւունքները և գոհացում տալով մարդկային իրեքին, կամ արհամարհական ոչ կարգ մը մը, որ նշան պիտի ըլլայ ահալ տալու մը:»

Մեր թղթակցը Լօնդօնից մեզ գրում է. «Բարիկեան, պ. Վանտալի ատենախօսութիւնը հայկական խնդրի մասին շատ համակարգով լուսեցաւ այստեղ. «Թայմս» ընդարձակօրէն կը խօսի այդ բանախօսութեան վրա, դրուատելով պ. Վանտալը, չորսն պատմական գործերը, ինչպէս Ֆրանսիային նոյն և Անգլիոյ մէջ սքանչացումով կը կարգադրին:»

«Kölnische Zeitung» լրագրի թղթակցը շատ մտալ գոյնեղով է նկարագրում Թիւրքաց-Հայաստանի այժմեան գրութիւնը: Վերջին զեպրելի պատճառով, ազգայնականութիւնը ծայրայեղ չքաւորութեան մէջ է գտնվում, չը նայելով եւրոպայից և Ամերիկայից եկող նպաստներին: Թիւրքաց ընթերցողները մինչև այժմ ոչ մի աղբիւրութիւն չեն գործել ժողովրդի դրութեան բարւոքման վրա: Նահանգապետները քրիստոնէական օգնականները որ և է ազգայնական չունեն կատարութեան կարգադրութիւնները վրա և կատարում են միայն նահանգապետների քարտուղարի դերը: Ժանդարմների մէջ ընդունված հայերին տրվել են հին վիճակների հրացաններ անպէտք փամփուշտներով, մինչդեռ թիւրք ժանդարմները զինուորված են մարտիկ միտքով: Նոր հրացաններով: Ոչ մի օգուտ չէ բերում նաև այն, որ առաջվանից աւելի քրիստոնեաներ են ընդունված ծառայութեան մէջ, որովհետեւ այդ դրուում է միայն մահմեդականների դժգոհութիւնը, բայց դրանց ծառայութեան մէջ ընդունված քրիստոնեաները մեծ մասամբ վատթար են թիւրքերից, և հայերը վերաբերվում են նրանց մեծ անվստահութեամբ և թշնամաբար:»

Իսկ սուլթանը չարունակ հատապաշտում է եւրոպային, որ ընթերցողները արդէն մտքոված են...

«Nord» լրագիրը հետեւալ նկատողութիւնն է կրկնում երկրորդ անգամ, «Եթէ պետութիւնները դեպքանքները Կ. Պոլսում վերջացնելու վրա են ընթերցողների ծրագիրը և, հաւանօրէն, Բ. Դուռը մինչև մի չափով, ծանուցում կը ստանայ այդ մասին: Պէտք է յուսալ, որ օսմանեան կատարութիւնը կը շարունակուի այս անգամ ալ ևս իր զինքի դժգոհութեան և չեղվելու նախկին պիտեմին, այլ ցոյց կը տալ լիազատար և անկեղծ պատրաստակամութիւն՝ իրագործելու պետութիւնները իր առաջարկած ընթերցողները և կայսրութեան վերջնական անկման առաջը կառնել: Այսպէս, հաւանօրէն է, որ մեծ պետութիւնների կուրհանները կը դառնան հրամաններ և Թիւրքիայի համար շատ կորստաւոր հետեւեալները կուենան:»

«Mémorial Diplomatique» լրագիրը յայտնում է, որ լորդ Սոլդերբիլին այս օրերս մի տեսակ ցոլթիւն ունեցաւ մեծ պետութիւնների դեպքանքները:

պաննորի հետ լծողութեամբ և նոր արեւելեան հարցը սկզբունքով կը լուծվի մինչև երեք շաբաթ:

ՆԱՄԱԿ ԱՆԿՂԱՅԻՆ

1 օնդ օն, յունվարի 20 (փետրվար 1)

Արթիւն փայլի համարաւոր շարժումներն արեւելեան հարցը սկզբունքով կը լուծվի մինչև երեք շաբաթ:

1) Պատրիարքարանը կը պահանջէր մէկ կամ երկու տարի զինուորական տուրքէ ազատ թողնել հայերը: Պատասխան կը տրուի թէ նախագային իշխանութիւններուն պիտի գրուի, տեղական ժողովները (մէջիցը իտալէ) պիտի ընեն և եթէ պէտք տեսնուի՝ պիտի հաղորդուի տեղական կառավարութեան և ան ալ անոր համարձակ պիտի նայի:

2) Տասնորդներ կառավարական շտաբները լեցուած արմատներն փոխ տալ հայ ժողովրդին: Պատասխան, պիտի գրուի, և եթէ կայ, անբնական համար կը տրուի փոխ: (Հարկ է ըսել, որ չի կայ պիտի ըստի):

3) Երկրագործական դրամատները ածան առկայով փոխառութիւն ընեն: Արդէն կընեն, պիտի գրուի, որ ազատութիւններ առնելով աւելի ընդարձակօրէն ընեն: (Երկրագործական դրամատները ստակ չի կայ, և եթէ ըլլայ իսկ թիւերը կուտան):

4) Այլ կողմէն տուրքէն հայոց բաժինը զրկել առաջնորդարաններուն: (Թիւրքիւն է, թէ քանի մը տարի առաջ տասնորդի տուրքներուն վրայ յաւելում եղաւ, այդ յաւելումը պիտի ծառայէր հանրային կրթութեան զարգացումին, ամեն ժողովրդէն առնուած տուրքին չափովը գումար պիտի յանձնուէր առաջնորդարաններուն, քանի որ բոլորներն իրենց կրթական պէտքերը իրենց կը հոգան): Պատասխան, հայոց զարգացումը թիւրքերէն լեզուի ուսուցիչ պիտի զրկուի և ամակամար կառավարութիւնը պիտի վճարէ:

5) Հայերը ընդունուին կառավարական վարժարաններուն մէջ (զինուորական, և այլն): Երբ յարմար ժամանակը գայ՝ իմաց կը տրուի:

6) Յայտնի է, թէ օգոստոս 14/26-ի ղեկավարներն յետոյ Պոլսոյ զանազան ընկերութիւններ, ինչպէս չորեքշաբթի Երեւանի խաչքիւն և Մախսուտէն, հրաժարեցուցին իրենց հայ պաշտօնականները, որոնց շատերը բազմաթիւ տարիներէ ի վեր կը ծառայէին: Տիմա պարտիարքարանը կը պահանջէր, կամ կը խնդրէր, ինչպէս կուզէր, որ այդ վարչութիւններուն հրահանգը արտի ներքէն այդ պաշտօնականները առնելու: Կառավարութիւնը այդ վարչութիւններուն չի խառնուիր, եթէ անոնք առնել կուզեն, և և է առարկութիւն չի կայ: (Այդ վարչութիւնները կառավարական են, և սուլթանը Երեւանի խաչքիւն մեծ բաժնէտէն է):

7) Յանձնաժողով մը կազմուի, որպէս զի հոգային խնդիրները ընեն, այսինքն հայերէն իւրեւան հողերը իրենց վերադարձնելու զինուորական ընտանիք: Արդէն ժամանակին թափու եղած, այդ խնդիրները կարգադրուած են:

8) Տառապեալ հայերուն օգնելու համար հանգանակութիւն ընել և այդ նպատակով յանձնաժողով մը կազմել: Ինչ հարկ, արդէն վսեմաշուք խմբակը Հազգը փայլի նախագահութեան տակ յանձնաժողով մը կայ, և եթէ պատրիարքարանը կուզէ՝ կարող է երկու մարդ զրկել այդ յանձնաժողովին: Այդ յանձնաժողովին կառավարութիւնը 2000 ոսկի պիտի յանձնէ՝ հայերուն բաժնելու համար:

9) Հայ պաշտօնականներ նշանակուին, և ոստիկանութեան ու ոստիկան-զինուորներուն մէջ հայեր առնուին: Արդէն նշանակուած են, ինչպէս պատրիարքարանը նոր խնդիրներ կուզէ յարուցանել: Իսկ ոստիկան և ոստիկան-զինուորներու համար, թող ուղղող արձանագրուի (եթէ ձեռք հաղորդեցի, թայմընէն առնելով, թէ ոստիկան զրուարն զուրկել ինչ պատուաւ կուզայ):

10) Թիւրք թերթներուն հրաժան ըլլայ հայերու մասին այլ ևս այդ թշնամական լեզուով չը գրեն: Օրադիրները ճիշդ իրողութիւնները արձանագրեն, ղեկավարը համաձայն լեզու գործածած են, բայց և այնպէս գրաբնութիւնը պիտի նայի:

11) Եկեղեցական առանձնահարկները յարգուին, և յանցաւոր եկեղեցականները պատրիարքարանի միջոցաւ պատժուին: Նախ այդ լրտեսական գործիւններ վերջ տրուի: Օրէնքը պիտի գործադրուի, և օրէնքի համաձայն պիտի պատժուին ամեն կարգի յանցաւորները: Ոստիկանութիւնը ազատ է ուզածին պէս գործելու:

12) Խաղաղական կրօնը ընդունող հայերը ազատութիւն ունենան վերստին քրիստոնէութեան դառնալու: Թիւրքիւն մէջ կրօնական ազատութիւնը կատարելաւ է, ամեն մարդ ուզած կրօնը կրնայ դառնել, որեւի՞ն ինչ հարկ նոր հրամանի:

Ինչպէս կը տեսնէք, կառավարութիւնը միշտ օրէնքի անունով կը խօսի, մեր մէջն ալ առնալով թիւն չէ թեւերն անիծած, խօսքն օրհնած: Փախի մը օրէ ի վեր արդէն կը խօսուէր սուլթանին այս պատասխաններուն վրայ, ու քիչ շատ անհաւատելի կը թուէր, բայց այսօր պաշտօնապէս հաստատուեցաւ: Կ. Պոլսոյ պատրիարքարանը, առանց ուղեւոր, նոր հարուած մը տուաւ թիւրք կառավարութեան կողմէ եղած այն յայտարարութիւններուն, թէ բարեկարգութիւնները կը գործադրուին: Այսքան համեստ պահանջումները իսկ երբ կը մերժուին, ալ անգին ինչ աւելի ինքնական բարեկարգումներ կարելի է յուսող թիւրքերուն ձեռքով: Եթէ պատրիարքարանը այս ամենահամեստ պահանջումները չընէր, անշուշտ նոր զէնք մը պիտի չը տար անոնց, որք կը պնդեն, թէ սուլթանը ամենաշինչ զիջում մը իսկ չընէր հայերուն: Աստուած մարդս ասանկ բարեկամներէ պահէ:

ՆԱՄԱԿ ԲՈՂԱՊԱՐԱՅԻՆ

Ռ օ ս ւ ճ ու ը, յունվարի 14/26 ին

Քաղաքի մէջ 1—2 ամիսէ ի վեր զարգացական խնդիր մը ծագեցաւ: Պոլսէն երկու վարչականներուն գալստեամբը: Դրանք կը փախաբէին զարգի զինք իրենց ձեռքը առնել ու իրենց ուզած ուղղութեամբ կառավարել զարգաց: Հոգաբարձութիւնը՝ մասնաւոր թաղականութիւնը, որոց մէջ տակաւին կը տրիէ այդ հնադարեան գաղափարը, կամ աւելի ճիշտ նախապաշարմունքը թէ՛ վարչականները կրնան կրթական գործը լաւ կառավարել, այնքան միամիտ գտնուեցան, որ նրանց կեցածաւրութեանց զո՞հ գնալով՝ համակերպեցան անոնց ընթացքին ու քիչ մնաց որ վարչականները իրենց փախաբէին պիտի հասնէին, եթէ անկեղծ ու զօրաւոր ձեռքեր չկանգնէին զիրենք: Դրանք կուզէին իշխել ժողովրդեան վրայ, կերպէին անցեալ դարերը, սակայն ժողովուրդը այժմ արթնցած ու բաւական զարգացած է, նա չէ կարող իրենց խաբուութեանց զո՞հ գնալ: Մի կողմէն Քաղաքի զարգացեալ կրթատարութիւնը խափն բողոքեց այդ ապօրինութեան դէմ, իսկ միւս կողմէն զարգի աշակերտները բողոքաբեր մը պատրաստեցին ու ստորագրելով զրկեցին հոգաբարձութեան, ասելով թէ՛ եթէ կրօնաւորներով կուզէր կամ կառավարել մենք այլ ևս չենք շարունակել զարգացը ու հրաժարեալ կը նկատուինք: Հոգաբարձութիւնը զիջումներ եղաւ այն առեւ ուղիով որով իրենց պաշտօնին կուցի, որոց մին բոլորովին հրաժարեցուցած էր, իսկ մի ուրիշի ամակամէն մի գումար զեղծած էին: Կիմանալով թէ վարչականներն ևս մի-մի պաշտօն ստանձնած են զարգի մէջ:

Անկեղծ խօսելով, երկու վարչականներն ևս արժանի չեն իրենց կոչման, ասանկ ժողովուրդը իրենց խօսած քարոզներուն կը համարէ անգիտակցաբար, իսկ ինտելիգենտ երիտասարդութիւնը բնաւ կարեւորութիւն չը տար իրենց, քանի զի իրենց գոյնը չուտ դուրս տուին: Կրօնաւորները, ըստ մեզ, բնաւ իրաւունք չունին կրթական գործի մէջ մաս առնելու, դարուս պահանջն այս է: Դրանք միմիայն եկեղեցական խնդիրներու խառնուելու են, այն էլ միայն այն առեւ, երբ նոքա արժանի են իրենց կոչման ու երբ նոքա անկեղծութեամբ ու բարեարտութեամբ կատարեն իրենց պարտականութիւնները: Դրանքով կառավարեցան կրօնաւորաց արդեցութեան տակ: Փորձերը մեզ ցոյց տուին թէ՛ բնաւ օգուտ տեսած չենք իրենց, այլ ընդհակառակն միշտ վնաս: Տեղի է ժողովուրդը:

դեան առածին թէ՛ «փորձեալը կրկին փորձել» յիմարութիւն է:

Յովհաննէս Գեորգեան

Կրեմլի ՆՈՐ ԱՊՍՏՈՒՐՈՒԹԻՒՆԸ

«Daily News» լրագիրը հետեւեալ մանրամասնութիւններն է հաղորդում: «Կրեմլի» Հերակլեան շրջանում անկարգութիւններ ծագեցին: Այս օրերս պղտեղ սպանկեցին տաւր բրիտանական և այդ պատճառով հաղորդակցութիւնը մայրաքաղաքի հետ ընդհատուեց: Օտարազգի հիւպատոսները պահանջեցին գնահատական հանգապետ Բէրովիչից, որ նա արտակարգ միջոցներ ձրանախական, անգլիական և իտալական նաւերը գնացին Հերակլիւն, որտեղ ուղարկվել են և օսմանեան դժբերքը: Շրջանի նահանգապետը ձեռքաւարեց ծագած անկարգութիւնների երեք գլխաւոր հեղինակներին: Քրիստոնեաները Հերակլիւնում և դրացի շրջաններում զէնք են առնել իրանց սեփական պաշտպանութեան համար: Նրանք դուռը են բոլոր գլխաւոր պատերազմային կէտերը, որպէս զի թոյլ չը տան մահմետական զիւղացիներին տեղափոխվել Կանէա: Երկու կրեմլով որ կարող են լուրջ ընդհարումներ տեղի ունենալ, հիւպատոսները մը-սաղիր են ուղարկել իրանցից մէկին և մուխէ-սարիֆին՝ քրիստոնեաների բանակը, նրանց խաղաղացնելու նպատակով: Քրիստոնեաները վախճանով անցած տարվայ գաղափարներին կրկնութիւնից, անհոգի, անհոգ են, որ իրանց թոյլատրվի փախելը:

Կրեմլի նոր ապստամբութիւնը մի նոր փառաւոր ապստամբ է այն ճշմարտութեան, թէ Եւրոպան զուր տեղ ժամանակ է կորցնում, թոյլ տալով անուղիղ արիւն թափել, քանի որ թիւրքաց կառավարութեան խաբեւոյութիւնները անվերջանալի են և անսպասելի:

ԱՐՅԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Հումբերտո թագաւորը վերջնական պաշտար առաջարկեց Սանիտարական ժողովին, այնտեղ նիստեր կազմուէր համար:

—Իտալական հիւպատոսը հաղորդում է, որ ժամանաւոր Բոմբարձի թուրքացի է, բայց, դրա փոխարէն, նա ստատիկ կերպով տարածվում է զէպի Հիւսիսային Ասիա:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԲՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 29 յունվարի: Հակաժամադրատային յանձնաժողովը յունվարի 28-ին որոշեց հետեւեալ միջոցները ձեռք առնել: 1) Հնդկաստան ուղարկել մի եկեղեցիական մասնագետը՝ Թիւրքիւնից, անցն ու տեղը ժամատախտը ուսումնասիրելու համար: 2) արգելել ներկայ տարին ուսումնասիրողական մասնագետներին ուսումնառելու: 3) արգելել Երեւանի սուրբ տեղերը, միջոցներ ձեռք առնել բաւարար քանակութեամբ բժշկական ցրտէն: 4) հակաժամադրատային շինուկ պատրաստելու: 5) ժամատախտը տարածվելու ամենամեծ վտանգ ներկայացնող տեղերը առանձին լիազօրեց ուղարկել, բժիշկներին, օֆիցերներին և քաղաքացիական պաշտօնականներին ուղարկելու: 6) անգլիական իշխանութիւններին նպատակելու՝ յանձնաժողովի որոշած ձեռնարկութիւնները ի կատար ածելու համար: 7) հրատարակել «Правит. Вѣстн.» լրագրում բոլոր, առանց բացառութեան, ճիշդ տեղեկութիւնները ժամատախտի ընթացքի և յանձնաժողովի ձեռք առած միջոցների մասին:

Կ. ՊՈԼԻՍ, 30 յունվարի: Սանիտարական խորհուրդը վճռեց մի սանիտարական յանձնաժողով նշանակել Բաքույում, որը պէտք է խիստ կարանտիններ տեսնի ծովային վրայ և հսկողութիւն ունենայ, որպէս զի ժամատախտը չը ժամնի: Հնդկական արդիւնքների համար 15 օրվայ կարանտին է նշանակված: այն նաւերի համար, որոնց վրայ ժամատախտը հիւանդանալու դեպքեր կը լինեն: 20 օրվայ կարանտին է նշանակված, նորից ժամանակամիջոց է նշանակված Բէրովիչիստանից եկած արդիւնքների համար:

Կ. ՊՈԼԻՍ, 30 յունվարի: Կրեմլի գնահատական հաղորդագրութեան համաձայն, Կատարում սպանված են 23 մահմետականներ:

Այնօրը և քաղաքական խորհուրդը միաձայն վճռեցին ուղարկելու ուղարկել պատրիարքին:

կամ ջնջել իր ապօրինի վճիռները, կամ հրաժարական տալ: Պատրիարքը դրանից յետոյ հրաժարական տուեց: Նրա պաշտօնակատար է նշանակված Երեւանի եպիսկոպոսը:

ՏԱՇԿԷՆԸ, 30 յունվարի: Կանադացիները ժամատախտը վերաւորը չէ հաստատուում, երբի սխալ է:

ՊԱՐԻՉ, 30 յունվարի: Պոլսոյ պղտեղ Պատմութիւնները Գոլտօր Բու բաղադրութիւններ էր տալիս հակաժամադրատային շինուկ պատրաստելու մասին, որը եւանդով շարունակվում է մի և նոյն ժամանակ յիշեցրեց, որ ժամատախտի միջոցը զարգանում է հողի մէջ և նախ քան հանդի մարդուն՝ անցնում է ինչպէս կարծում են, կենդանիներին: Բոլոր յայտնի միջոցներին, ժամատախտի միջոցը զինուորական ամենախիտը ոյժ ունի: Զանազան տարածման գլխաւոր պատճառը Հնդկաստանում վարակված մարդկանց անմաքրութիւնն է: Այդ բանը ի նկատի ունենալով, եթէ ժամատախտը, անսպասելի կերպով կը յայտնվի Եւրոպայում, պէտք է դրանից չը վախենալ: Բարեկամող հողի բացակայութեամբ ժամանակ, ժամատախտը չի տարածվի և շուտով երկրի, կանխեստանայ:

Կ. ՊՈԼԻՍ, 30 յունվարի: Կրեմլից ստացված տեղեկութիւնները համաձայն, զիջեց ընդհարում տեղի ունեցաւ քրիստոնեաների և մահմետականների մէջ, մանրամասնութիւնները չեն ստացված:

Դեպքաները ստացան երիտասարդ թիւրքերի կոստացութեան նոր շրջաբերականը, որի մէջ նրանց տեղեկացվում է, որ կոմիտեոյ հարկադրված կը լինի խօսքից դուրս անցնել, եթէ փոխութիւն չը կայանայ այժման ընթիւնում:

Կ. ՊՈԼԻՍ, 30 յունվարի: Յունական «Հիդրա» զրահակիր Կանէի շրջաններում ար իշեցրեց զէնքեր և ուսումնասիրեց:

ԿԱՆԷՅԱ, 30 յունվարի: Այնչէն փոխութիւններ չեն եղել գործերի գրութեան մէջ: Այստեղ հանգստութիւն է տրուում: Նաւերի վրայ թաղանթված բոլոր անձինք այժմ ար լեւաբանաց: Թիւրքաց իշխանութիւնները շատ աւ են իրանց պահում: Յունական նաւերի գործունէութեան երանակը, որոնք կառավարվում են ապստամբների հետ յարաբերութիւններ ունենալու մէջ մի փոքր վտանգ է ներկայացնում:

ԼՕՒԴՕՒՆ, 31 յունվարի: Կ. Պոլսոյ հաղորդում են «Times» լրագրին հետեւեալ: Ի. Գուրը հեռագրով յանձնել է իր դեպքաներին առաջարկել պետութիւններին Կրեմլի ներկայ վիճակը և դարձնել նրանց ուղղորդութիւնը Յունաստանի վարժունքի վրայ:

Նոյն լրագրին հեռագրում են Կանէից, որ Հերակլիւնի մէջ իրերի վիճակը յանկարծ փոխացաւ: Մահմետականները յարձակվեցին քրիստոնեաների անդի վրայ և նրանց կործակելով թոյլ չեն տալիս փախչողներին ազատվել ծովային ճանապարհով:

«Times»-ին հաղորդում են, թէ Բերովիչ փախչի պահանջում են զինված քրիստոնեաներ Հայկապոլի յունական հիւպատոսարանում:

Կ. ՊՈԼԻՍ, 31 յունվարի: Կանէից ստացած տեղեկութիւնների համաձայն, այնտեղ մնացել են միայն մահմետականներ: Բոլոր քրիստոնեաները գնալով են նաւերում:

ԿԱՆԷՅԱ, 31 յունվարի: Հաւատացնում են, որ Կալիպոլիում ժամատախտի ոչ մի դեպք տեղի չէ ունեցել: Բերովիչիստանում դեռ ոչ մի ժամատախտի դեպք չէ հաստատված:

ԽՄԲԱԳՈՐԾԻՒՆ ԶԱՅՆՈՒՄ Է

ԲՈՍՏՈՂ, Ա. Էստատեանց, Ձեռք արդէն ուղարկված է առաջին համարը՝ իսկ հասցէի մէջ սպրդած սխալը ուղղվեց:

ՏԱՊԱՐԹՈՂ, Խ. Տէր-Մարտիրոսեանց, Ձեռք ուղարկվեց «Մշակ»: Բարեհաճեցէր ուղարկել մեզ պատասխան ապստամբների համար, որպէս զի ստուգեն, թէ ծրարը ստացված է, թէ ոչ: Խմբագրական մատենանում չը կայ:

ԹԻՖԼԻՍ, Ա. Թանգ, Ձեռք նամակը «Արձաղան քի» դէմ, չենք տպագրի այն պարզ պատճառով, որ ինքը, պ. Արքայը Յովհաննիսեան, տպագրելով հայտնաբերեց Ներսիսեան զարգի ուսուցիչ Ս. Մարտիրոսեանի մասին, շատ լաւ համոզված է, որ այդ բոլորը զրպարտութիւն է և երբխայական վրէժնորդութեան անմիտ միջոց: Բացի դրանից, զուր գուր էք կարծում, որ «Արձաղան» խմբագիրը չը գիտէ, որ պ. Մարտիրոսեան, իբրև ուսուցիչ, ամբողջ զրկու բարձր է այն մանկավարժներին, որոնք գովապաններ են վայելում փողոցային մամուլի էջերում, բայց որոնց «մանկավարժական» արժանիքը կամ աշակերտին ծառի վրայ կապելն է, կամ զատարանում նրանց փողոցային բուռները նայելու: Անտես արեք: Դրանք արժանի չեն պատասխանի:

ԵՐԵՎԱՆ, Յ. Տ. Ս. Ձեռք հասցեով «Մշակ» ուղարկվում է յունվարի 1-ից անդրհատ: Ձեռք կարող հասկանալ, թէ ինչ է պատճառը, որ մինչև այժմ չէր ստացել: Ստուգեցէր, խնդրում ենք, պատասխանը:

ԹԻՖԼԻՍ, Մարտ 24-ին: Ստացել ենք 2 բուրքի, ձեռք «օրացոյցի» համար, բարեհաճեցէր ստանալ:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԳԱԼԱՆՈՒՐ
Հրատարակչի՝ ԱՆԴՐԵՅԱՍ ԱՐԴՈՒՆԻ

Типографія Канцел. Главвонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 222.